ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «06» օգոստոսի 2019թ.

2019թ-ի օգոստոսի 5-6, ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3, 3-րդ հարկ 301 սենյակ հասցեում՝ «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» Հասարակական կազմակերպության (այսուհետ նաև «ԱՏՁՄ» ՀԿ) գրասենյակում, տեղի ունեցավ **ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Արկադի Սահակյան	ԱՏՁՄ ՀԿ իրավաբան (հանձնաժողովի նախագահ).
Ասյա Սեփխանյան	ԱՏՁՄ ՀԿ միջոցառումների կազմակերպման մենեջեր.
Արթուր Ավետիսյան	ԱՏՁՄ ՀԿ միջոցառումների կազմակերպման մենեջեր.
Կարեն Մկրտչյան	«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ ներկայացուցիչ (հանձնաժողովի քարտուղար):

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Սահակյանը, իսկ քարտուղարն էր՝ Կ. Մկրտչյան:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ա. Սահակյանը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Ռոբոտ-կոնստրուկտորի հիմնական հավաքածու	69864000
2.	Ավտոմատացման ու էլեկտրոնիկայի ընդլայնման հավաքածու	69864000
3.	Նորացման ու գործիքների լրացուցիչ հավաքածու	69864000

ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը ներկայացվել են փաստաթղթային տարբերակով և բացվել են ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3, 3-րդ հարկ 301 սենյակ հասցեում հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի օգոստոսի 5-ին, ժամը «11:00»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձը /այսուհետ՝ նաև մասնակիցը/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	«Սայմոտեկ» ՍՊԸ	ք. Երևան, Հ. Հակոբյան 3, 3-րդ մասնաշենք, 315 սենյակ	info@symotec.am

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցը հայտը կազմել և ներկայացրել է ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.,
- Մասնակցի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.,
- Մասնակցի կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.,

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների և զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի*		Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
համարը	անվանումը	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	Ռոբոտ-կոնստրուկտորի հիմնական հավաքածու	1	«Սայմոտեկ» ՍՊԸ	57746572	69295886.4
2	Ավտոմատացման ու էլեկտրոնիկայի ընդլայնման հավաքածու	1	«Սայմոտեկ» ՍՊԸ	57510000	69012000
3	Նորացման ու գործիքների լրացուցիչ հավաքածու	1	«Սայմոտեկ» ՍՊԸ	57510000	69012000

*վարվել են բանակցություններ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սակայն նոր նվազեցված առաջարկներ չեն ներկայացվել:

Որոշվեց՝

1. Ա. Սահակյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակցի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել «Սայմոտեկ» ՍՊԸ ին:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ քան Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3, 3-րդ հարկ 301 սենյակ հասցեում՝ «ԱՏՁՄ» ՀԿ գրասենյակում:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սահակյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Սեփխանյան _____

Ա. Ավետիսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Կ. Մկրտչյան _____

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված շահերի բախման բացակայության մասին

ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սահակյանս, հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սեփխանյանս, Ա. Ավետիսյանս, Ա. Ավետիսյանս և հանձնաժողովի քարտուղար Կ. Մկրտչյանս հայտարարում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ իմ կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ ինձ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը չեն հանդիսանում սույն ընթացակարգի մասնակից:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սահակյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Սեփխանյան _____

Ա. Ավետիսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Կ. Մկրտչյան _____

Հավելված N 1
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի մայիսի 20-ի
N 229-Ն հրամանի

Հաստատված է
24 հուլիսի 2019թ.-ին
Ընդամենը՝ 2 էջ

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ
ՀԱՅՏԵՐԻ

Պատվիրատուի անվանումը՝ «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ
Գնման ընթացակարգի
ծածկագիրը՝ «ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4»
Գնահատող հանձնաժողովի
քարտուղար՝ Կարեն Մկրտչյան _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը)	Մասնակցի՝ այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները և ամսաթվերը, որով ներկայացվել է հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում՝ այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը)	Հայտերի ստացման		Հայտը գրանցողի ստորագրությունը	Նշագրումներ
			ամիսը, ամսաթիվը	ժամը		
1	<<[illegible]>> ՍՊԸ	[illegible], անձն. [illegible] 000688325	05.08.2019	10:15		